ՀԱՄԱՎԱՐԱԿ. ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՎԱԽՃԱ՞Ն, ԹԵ՞ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԻ ՎԵՐԱՀԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ

N3, 2020

Հիմնաբառեր. *COVID-19 համավարակ, գլոբալացում, գլոբալ շղթաների խզում, պետության դերի վերահիմաստավորում*

Դավիթ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1995 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Էկոնոմիկայի պետական կարգավորում» մասնագիտությամբ, 1998 թ.՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի ասպիրանտուրան: 1999 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2013 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2016 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999-2001 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2019 թ. նշանակվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն: Դասախոսում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Հեղինակ է 15 մենագրության և ավելի քան 80 գիտական հոդվածների ու զեկույցների:

https://orcid.org/0000-0003-3224-2461

Հոդվածում հեղինակն անդրադարձել է COVID-19 համավարակի հետևանքներին գլոբալացման համատեքստում, ինչի արդյունքում կապարել է հետևյալ եզրահանգումը. աշխարհը բնավ պատրաստ չէր նման հարվածի, և դա է պատճառը, որ առաջին իսկ ազդակների դեպքում խզվեցին տարիներով ձևավորված կապերը: Նրա բնորոշմամբ՝ «փխրուն» գլոբալացման փլուզումը հիմք է ստեղծում պետական պատերնալիզմի համար՝ խթանելով «ազգ-պետություն» հայեցակարգի հետագա զարգացումը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հեղինակը ներկայացրել է նաև որոշ մեկնաբանություններ հետհամավարակային աշխարհի ապագայի վերաբերյալ:

Գլոբալացման ներկայիս մոդելը վերջնականապես ձևավորվել է 2000-ականների սկզբին: Դրա հիմքում հետևյալ պատկերացումն է. այն երկրները, որոնք շատ վաղուց են ապրում շուկայական տնտեսության կանոններով, կարող են միաժամանակ իրենց արտադրական հզորությունները տեղափոխել «ծայրամասեր» և արևմտյան համակարգի տնտեսական հավասարակշռությունը պահպանել ֆինանսական գործառնությունների հաշվին:

2008-2009 թթ. ճգնաժամն արդեն իսկ ցույց է տվել վերոնշյալ մոտեցման հիմնազուրկ լինելը՝ համաշխարհային տնտեսության անհամամասնությունների համահարթեցման առումով: Դեռևս 2014 թ. մարտին «Թայմ» (Time) շաբաթաթերթում տեղ գտած մի հրապարակման մեջ առկա էր այսպիսի նկատառում. «Արդեն երկու տարի է՝

միջազգային առևտրի աճը զիջում է համաշխարհային ՀՆԱ աճին (Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ առաջին անգամ), ինչը նշանակում է, որ համաշխարհային տնտեսությունը հասել է շրջադարձային կետի: Անկախ մեր կամքից, դա կանդրադառնա երկրների և ընկերությունների վրա»[1]:

COVID-19 համավարակը նպաստեց աշխարհատնտեսական կապերի ձևավորված համակարգի ակնթարթային խաթարմանը՝ 2008-2009 թթ. ճգնաժամից ավելի քան 10 տարի անց քաղաքական գործիչներին, գործարար միջավայրին և հասարակությանը ցույց տալով ժամանակակից ֆինանսական համակարգի խոցելիությունը[2]:

Դրա հետ մեկտեղ, այն տեսակետը, որ Covid-19 անսպասելի «սև կարապ» է, այնպիսի մի իրադարձություն, ինչին հնարավոր չէր նախապատրաստվել, մեղմ ասած, վիճահարույց է: Իրականում, հանրային առողջապահության ակտիվիստները, ներառյալ Բիլ Գեյթսը և համաճարակաբանները, այդ թվում՝ Մինեսոտայի համալսարանից Մայքլ Օսթերհոլմը, տարիներ շարունակ ահազանգում էին համավարակների և գրիպի հարուցած համակարգային ռիսկերի մասին: Նույնանման նախազգուշացումներ էին հնչեցնում առաջատար հետախուզական գործակալությունները[3]:

Հետևաբար՝ որքան էլ ֆինանսական վերլուծաբանները փորձեն COVID-19 ներկայացնել որպես տխրահռչակ «սև կարապ», այդուհանդերձ, իրականությունն այլ բանի մասին է վկայում. այո՛, «սև կարապի» հայտնությունը հնարավոր չէ կանխատեսել, սակայն զանգվածային համաճարակները կանխատեսելի են: Աշխարհը, պարզապես, թերահավատորեն մոտեցավ ողբերգական սցենարի հավանակությանը[4]:

Հիրավի, գլոբալացման ճգնաժամի զգացողություն 2019 թվականին ձևավորվել էր մեծաքանակ անձանց շրջանում, և այսօր անսպասելիության տարրի վերաբերյալ մեկնաբանություններն ինքնախաբեություն են: Կայուն համարվող համաշխարհային համակարգը կաթվածահար եղավ շատ արագ կերպով, ըստ էության, ակնթարթորեն (միջազգային առևտրի և ավիափոխադրումների դադարեցման համար պահանջվեց ընդամենը մեկ ամիս):

Սակայն, գլխավոր խնդիրն այն է, որ ժամանակակից աշխարհն անընդունակ եղավ արձագանքելու արտաքին ազդակներին, որոնցից էլ բխում են կապիտալիզմի գլխավոր հակասությունները: Մասնավորապես՝

1. հակասությունը համաշխարհային «գլխավոր խաղացողների» և «ռևիզիոնիստական ուժերի» (առաջին հերթին՝ Չինաստանի և Ռուսաստանի) միջև,
2. հակասությունը պահպանված և արխաիկ համարվող ազգային ու էթնիկական նույնականացման և հետազգային, առավել ևս, հետէթնիկական երկարաժամկետ զարգացման անհրաժեշտության միջև,
3. հակասությունը «շուկայի անտեսանելի ձեռքի» և խոշորագույն, որպես կանոն, վերազգային կորպորացիաների շահերի միջև:

Գլոբալացման գործընթացի ճգնաժամի ազդակները բազմաթիվ են եղել: 2008-2009 թթ. համաշխարհային ճգնաժամը չի կարելի համարել միակ ահազանգը: Չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ գլոբալացման գործընթացը համընդհանուր ճգնաժամի մեջ է դեռևս 2014 թվականից, երբ պարզվեց, որ համաշխարհային տնտեսության փոխկախվածությունն իրողություն է, սակայն, այս հանգամանքի վրա հենվելով, հնարավոր չէ շոշափելի արդյունքի հասնել[5]:

---

[1] Андрей Кадомцев, Новый мировой порядок или переживет ли глобализация пандемию коронавируса? 13.03.2020, https://interaffairs.ru/news/show/25646

[2] Նույն տեղում:

[3] 3 միֆ համավարակի ճգնաժամի մասին և այն հաղթահարելու 5 առաջարկ, հունիսի 23, 2020, https://mediamax.am/am/news/society/38256/

[4] Максим Буев, Пандемия неминуемо приведет к значительному усилению роли государства в экономике, 22 марта, https://www.vedomosti.ru/opinion/columns/2020/03/22/825883-koronavirus

Նոր համավարակը փլուզեց համաշխարհային կայունության մասին պատրանքը. ներկայում երկրագնդի վրա քաոս է տիրում, ու յուրաքանչյուր պետություն գործում է ինքնուրույնաբար: Եվ գործողությունների համընդհանուր ծրագրման բացակայության այսպիսի պայմաններում երկրների քայլերը հիշեցնում են ծնողների վերահսկողությունից դուրս մնացած երեխաների վարքագիծ[6]:

Նոր համավարակն աննախադեպ «սթրես-թեստ» դարձավ գլոբալացման գործընթացի համար. խզվում են մատակարարումների շղթաները, երկրները ձգտում են ապահովել դեղամիջոցների պաշարներ և սահմանափակել մարդկանց, ապրանքների ու կապիտալի տեղաշարժը: Միաժամանակ, ճգնաժամը ստիպում է վերաարժևորել փոխկապակցված համաշխարհային տնտեսությունը ոչ դրական տեսանկյունից, քանզի գլոբալացումը ոչ միայն խթանեց վտանգավոր հիվանդության տարածումը, այլև ընդգծեց ընկերությունների և երկրների փոխկախվածությունը՝ դրանց դարձնելով անսպասելի ցնցակաթվածների (շոկերի) օբյեկտներ:

Համաձայն ավանդական պատկերացումների՝ գլոբալացումն ունի բազում առավելություններ. այն ստեղծում է ծաղկուն միջազգային շուկա՝ թույլ տալով արտադրողներին կառուցել մատակարարումների ճկուն շղթաներ, անհրաժեշտության դեպքում փոխելով մատակարարին կամ շղթայի որևէ այլ բաղադրիչ, բիզնեսն այս պարագայում սկսում է օգտվել աշխատանքի միջազգային բաժանման առավելություններից, և Ադամ Սմիթի հռչակած «ժողովուրդների հարստությունը» վերափոխվում է ամբողջ աշխարհի հարստության, մասնագիտացումն ապահովում է արդյունավետություն, որը, իր հերթին, նպաստում է համընդհանուր աճին: Գլոբալացման «արժանիքները» երկար կարելի է թվարկել, մինչդեռ հենց վերջիններս էլ պատճառ դարձան այդ գործընթացի ձախողման՝ ազդարարելով դրա շատ «փխրուն» լինելու մասին: Օրինակ՝ մասամբ նաև մատակարարումների հետ կապված խնդիրների պատճառով դյուրակիր համակարգիչների համաշխարհային արտադրությունը ս.թ. փետրվարին նվազեց 50%-ով, իսկ սմարթֆոնների արտադրությունը երկրորդ եռամսյակում նվազեց 12%-ով: Խնդիրն այն է, որ նշված երկու ապրանքի կոմպլեկտավորող նյութերն էլ արտադրվում են ասիական երկրներում[7]:

Նոր համավարակը, բացահայտելով համաշխարհային տնտեսության խոցելիությունը, հզոր ազդակ հաղորդեց տնտեսական մեկուսացման միտումներին, որոնք առանց այդ էլ վերջին տարիներին թափ էին հավաքել[8]: Ընդ որում, COVID-19 օբյեկտիվորեն հիմք է ստեղծում «էգոիզմի և հովանավորչության» վրա հիմնված նոր աշխարհակարգի փիլիսոփայության «օրինականացման» համար:

Սոցիալական պետությունների անխուսափելի տապալման և շուկայի անվերապահ հաղթանակի մասին տասնյակ տարիներով տևած խոսակցություններից հետո այսօր մենք ականատեսն ենք, այսպես կոչված, պետական պատերնալիզմի վերածննդին. բոլոր երկրները, առանց բացառության, ձեռնարկում են ընկերություններին և բնակչությանն աջակցող միջոցառումներ՝ նվազեցնելով հարկերը, օգտագործելով ամենատարբեր պահուստները, ավելացնելով պետական պարտքը[9]:

Ներկայիս ճգնաժամը միայն մասամբ է տնտեսական բնույթի. համավարակի տա-

[5] Дмитрий Евстафьев, Пандемия коронавируса: путь туда, но не обратно, «Эксперт» № Online version (0), Москва, 06.04.2020, https://expert.ru/expert/2020/15/pandemiya-koronavirusa-put-tuda-no-ne-obratno/

[6] Коронавирус унес в прошлое комфорт и блага глобализации. Какой будет жизнь после пандемии? 23 марта, 2020, https://lenta.ru/articles/2020/03/23/coronavirus/

[7] Генри Фаррелл, Абрахам Ньюман, Остановит ли коронавирус глобализацию в привычном понимании? Пандемия продемонстрировала уязвимости рынка, о которых никто не подозревал, 18.03.2020, https://globalaffairs.ru/articles/ostanovit-li-koronavirus-globalizacziyu-v-privychnom-ponimanii/

[8] Фёдор Лукьянов, Время и пища для размышлений, 17.03.2020, https://globalaffairs.ru/articles/vremya-i-pishha-dlya-razmyshleniya/

[9] Оксана Синявская, Коронавирус и будущее государства всеобщего благосостояния, 16.04.2020, https://ru.valdaiclub.com/a/highlights/koronavirus-i-budushchee-gosudarstva/

ռածումը երկրագնդի վրա շոշափում է հասարակության գոյության հիմքը: Ուստի պատահական չէ, որ մի շարք երկրների գործողություններ հիշեցնում են այն գեներալներին, որոնք պատրաստվում են արդեն ավարտված պատերազմին: Եվ այս պարագայում ոլորտներին և քաղաքացիներին ցուցաբերվող լայնածավալ ֆինանսական օժանդակությունն աղետալի դրության մեջ հայտնվածներին միայն ժամանակավոր միջոց է, սակայն դժվար թե դա հանգեցնի համաշխարհային տնտեսության՝ վաղուց հասունացած վերակառուցմանը: Ավելին, որոշ փորձագետներ կանխատեսում են նորազատական գլոբալացման բացասական միտումների, առաջին հերթին՝ համաշխարհային մասշտաբով անհավասարության հետագա խորացում: Այդուհանդերձ, համավարակի հիմնական հարվածն իրենց վրա կրում են հենց պետությունները, որոնց եզակի հնարավորություն է ընձեռված հետ բերելու տնտեսության կարգավորման մեջ իրենց կորցրած դիրքերը: Իսկ թե ինչ ծավալի գործողություններ կպահանջվեն այդ ուղղությամբ, և ինչի կհանգեցնի այդ ամենը, որևէ մեկը պատրաստ չէ կանխատեսելու:

Տնտեսության մեջ ֆինանսական ներարկումները վաղուց ի վեր փորձով ապացուցված, իսկ այսօր՝ առավել քան արդարացված իրողություն են, սակայն դրանց արդյունավետությունը բնավ ակնհայտ չէ, քանի որ «համավարակային զարգացման» վերաբերյալ կանխատեսումները փոփոխվում են վախեցնող հաճախականությամբ:

Համաշխարհային տնտեսությունն ամենևին հարմարեցված չէր նմանօրինակ ֆորսմաժորային իրավիճակի, երբ դրա «կանգը» ոչ թե տնտեսական գործոնների, այլ համավարակի հետևանքով էր: Չէ՞ որ ինչքան էլ զգալի էր «բարձր ֆինանսների» խզումն իրական հատվածից, որը հանգեցրեց 2008-2009 թթ. ճգնաժամին, վերջինիս առաջացման պատճառները, անխոս, տնտեսական էին:

Այսօր արդեն պետական կարգավորման այն միջոցներից, որ տարբեր արդյունավետությամբ կիրառում են կառավարությունները և կենտրոնական բանկերը, շատ քիչ բան է կախված: Եթե համավարակը չկանգնեցվի առաջիկա ամիսների ընթացքում, համընդգրկուն ֆինանսավորումը կխթանի գնաճը և ազգային արժույթների արժեզրկումը, ինչը, ըստ էության, արդեն իսկ առկա է՝ ի դեմս նավթի գների կտրուկ անկման և ֆինանսական գործիքների դրույքաչափերի նվազեցման: Ընդ որում, անհավասարության խորացումը «կպայթեցնի» սպառողական շուկաները՝ դրանով իսկ կապիտալիզմը դարձնելով անկենսունակ[10]:

Ամբողջ աշխարհում փորձագետներն առաջարկում են համավարակի և դրա հետևանքների չեզոքացման միջոցներ, սակայն նրանք ի սկզբանե պետք է ընդունեն, որ համաշխարհային տնտեսությունն այնպես չի աշխատում, ինչպես իրենք էին մտածում: Գլոբալացումը ենթադրում է երկրների միջև աշխատանքի միջազգային մասնագիտացման և կոոպերացման հետագա խորացում, որն աներևակայելիորեն բարձրացնում է արդյունավետության մակարդակը, սակայն, միաժամանակ, հանգեցնում աննախադեպ խոցելիության: COVID-19-ի «հարվածները» բացահայտում են այդ խոցելիությունը՝ համաշխարհային տնտեսության համար նախանշելով կառուցվածքային տեղաշարժեր: Անշուշտ, երբ կշեռքի նժարին են քաղաքացիների առողջությունն ու անվտանգությունը, պետությունները պատրաստ են արգելափակելու արտահանումը և սառեցնելու մատակարարումները, նույնիսկ եթե այդ գործողություններով վնասում են դաշնակիցներին կամ հարևան երկրներին[11]:

Նախորդ ցնցումների փորձից կարելի է մեկ հետևություն անել. ճգնաժամերն ի վիճակի են ջրի երես հանելու այն հիմնա-

[10] Николай Проценко, Назад к «большому правительству»: государства заливают коронавирус деньгами, 26 марта, 2020, https://eadaily.com/ru/news/2020/03/26/nazad-k-bolshomu-pravitelstvu-gosudarstva-zalivayut-koronavirus-dengami

[11] Генри Фаррелл, Абрахам Ньюман, Остановит ли коронавирус глобализацию в привычном понимании? Пандемия продемонстрировала уязвимости рынка, о которых никто не подозревал, 18.03.2020, https://globalaffairs.ru/articles/ostanovit-li-koronavirus-globalizacziyu-v-privychnom-ponimanii/

խնդիրները, որոնք բարեկեցիկ ժամանակներում հնարավոր է անտեսել: Ակնհայտ է նաև, որ հեռու չէ այն օրը, երբ տեղի կունենա հետևյալ գաղափարի վերաիմաստավորում. արդյո՞ք որևէ երկիր ցանկանում է (և որքանո՞վ է ցանկանում) կախում ունենալ մեկ այլ երկրից: Սա, իհարկե, չի նշանակում գլոբալացման հիմնարար ավարտ, թեև Նասիբ Թալեմը նույնպես կարծում է, որ համավարակը լրջորեն կազդի լոկալիզմի աճի վրա և ամբողջությամբ կվերափոխի մի շարք ոլորտներ: Նրա համոզմամբ՝ համավարակը կձգվի բավական երկար ժամանակ՝ մատուցելով բազմաթիվ տհաճ անակնկալներ[12]:

Միանգամայն հնարավոր է, որ ճգնաժամի դասերը լինեն բացասական՝ հանգեցնելով ազգային էգոիզմի ուժգնացմանը, «Գոյատևում է ուժեղագույնը» հայեցակարգի ամրապնդմանը, միջազգային բախումների սրացմանը և օտարերկրյա ներդրումների հայրենադարձմանը: Այլ խոսքով, ապագլոբալացման՝ առանց այդ էլ նկատելի միտումներն ավելի կուժգնանան՝ ուղեկցվելով պահպանողական ինտերնացիոնալիզմից (ներդրված դեռևս 1945 թ.) հրաժարմամբ:

Նոր ճգնաժամը հանգեցնում է նաև պետության դերի վերագնահատմանը: «Մորնինգ բրիֆինգ» (Morning Breafing) պարբերականի դիտարկմամբ՝ շուկայական տնտեսության հիմնական դրույթներն այլևս չեն գործում, քանի որ պետությունը երաշխավորում, վարկավորում կամ ուղղակի աջակցում է մասնավոր ընկերություններին ֆինանսական ներարկումներով: Պետությունը սկսում է անմիջականորեն միջամտել մասնավոր ընկերությունների գործունեությանը[13]: Մինչ համավարակը, հենվելով գլոբալացման գաղափարների վրա, իշխում էր մտայնություն, որ որոշակի վերազգային տնտեսական հրամայականներն ավելի կարևոր են, քան պետական քաղաքականությունը, սակայն երբ կարիք եղավ շտապ միջոցների ձեռնարկման, դա իրականացրեց հենց պետությունը:

Ազգային պետությունների դերի բարձրացման մեջ էական էր նաև ԵՄ անդամ երկրների՝ համաեվրոպական ինստիտուտների բյուրոկրատիայից հիասթափության գործոնը: ԵՄ-ին բարձրագույն իշխանությամբ օժտելու գաղափարները ցույց տվեցին իրենց սնանկությունը COVID-19 համավարակի հետ բախման առաջին իսկ փուլում: Փորձագետները կանխատեսում են, որ ԵՄ-ի համար համավարակի բացասական հետևանքները կհանգեցնեն եվրոպական միասնականության հայեցակարգի վերանայմանը[14]: Նրանց կարծիքով՝ համավարակի ավարտից հետո եվրոպացիները կվերաիմաստավորեն ԵՄ՝ որպես տարածաշրջանում միասնականության և կայունության երաշխավորի դերը: Կասկածի տակ են դրվել նաև եվրո-ատլանտյան համագործակցության հեռանկարները, ինչպես նաև ԱՄՆ-ի՝ որպես համաշխարհային առաջնորդի դիրքը:

Այս իրավիճակում ազգային պետություններն իրենց վրա են վերցնում քաղաքացիների անվտանգության ապահովման խնդիրները: Պետությունը ստիպված է ուժեղացնել իր դերը տնտեսության մեջ, որպեսզի աջակցի սնանկացող տնային տնտեսություններին և ընկերություններին, վերականգնի խզված արտադրական շղթաները, նվազեցնի գործազրկությունը, որը կարող է դառնալ զանգվածային: Դրանից հետո երկրները կզբաղվեն առավել երկարաժամկետ լուծում պահանջող հարցերով, այդ թվում՝ առողջապահական համակարգերի արդիականացմամբ:

Այսպես թե այնպես, պետությունը մշտապես «մտնում» է համակարգ (լինի դա որոշակի շուկա, թե ամբողջ տնտեսությունը),

[12] Георгий Голованов, Пандемия положит конец мировой экономике в ее нынешнем виде, 22 апреля, 2020, https://hightech.plus/2020/04/22/pandemiya-polozhit-konec-mirovoi-ekonomike-v-ee-nineshnem-vide

[13] Похоронит ли коронавирус рыночную экономику: Борьба с пандемией усиливает роль государственного регулирования, 12.04.2020, https://www.ng.ru/editorial/2020-04-12/2_7841_editorial.html

[14] Ирина Таран, Елизавета Комарова, Стадия переосмысления: как пандемия коронавируса может трансформировать Европейский союз, 5 мая, 2020, https://russian.rt.com/world/article/743470-evropa-es-polsha-koronavirus-vlast

երբ վերջինս դառնում է անկայուն[15]: Դեռ երեկ գործընկեր համարվող երկրների միջև հակասությունների աճը և «սահմանազատումը» դիտարկվում էին որպես գլոբալացման ճգնաժամի նկատմամբ բնական արձագանք: Համավարակի պայմաններում պարզվեց, որ ազգային մակարդակով ընդունվող որոշումներն առավել արդյունավետ են, քան վերազգային կառույցների աշխատանքը: Բացի դրանից, կառավարությունների անհատական որոշումներն ավելի հաճախ են արժանանում քաղաքացիների աջակցությանը, քան միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող գործողությունները[16]:

Այսօր վերստին ապացուցվում է, թե որքան վճռորոշ նշանակություն ունի խնդիրների համատեղ լուծումը: Այլ խոսքով, ճգնաժամը կանխորոշեց հասարակական կյանքի 40-ամյա պարբերաշրջանի՝ պետության մասնակցության բացառման նորազատական դարաշրջանի վերջը, որն ի դեպ արդեն իսկ ակնհայտ էր դարձել 2008-2009 թթ. համաշխարհային ճգնաժամի ժամանակ:

Իրերի նախկին դրվածքին՝ հանձին նորազատական գլոբալացման կամ կենտրոնացված սոցիալ-ժողովրդավարական համակարգի, վերադարձ լինել չի կարող: Այսօր օրակարգում է ընդհանուր բարեկեցության նոր մոդելի ստեղծման հարցը՝ հիմնված սոցիալական բարեկեցության և «տեղային» ժողովրդավարության վրա[17]:

Իսկապես, տնտեսական ազատականության համար սկսվում են դժվար ժամանակներ: Կարելի է նույնիսկ արձանագրել, որ COVID-19 այն «կսպանի»[18]: Այդուհանդերձ, փորձագետների կարծիքով, դեռևս վաղ է խոսել գլոբալացման մոդելի լրիվ տապալման մասին, քանի որ համավարակի ավարտից հետո երկրների միջև առկա կապերի մեծ մասը կվերականգնվի, սակայն ընթացիկ վիճակը լուրջ դաս կդառնա «գլխավոր խաղացողների» համար[19]:

Ներկայիս «փրկարարական» գործողությունները նշանակում են հրաժարում գործող տնտեսական համակարգից: Իհարկե, աշխարհը կորոնավիրուսի համավարակի ավարտից հետո կբնութագրվի ոչ միայն տնտեսական կյանքում պետության միջամտության կտրուկ ուժգնացմամբ: Որոշ փորձագետների կարծիքով՝ գլխավոր հետևանքը կլինի ապագլոբալացումը: Համավարակն ի ցույց դրեց մինչ այժմ գոյություն ունեցող գլոբալ արժեշղթաների անհուսալիությունը: Ինքնաբավությունը կդառնա որոշիչ գործոն շատ երկրների կառավարությունների համար: Արդյունքում ազգային տնտեսություններում տեղի կունենա ներդրումների վերաբաշխում: Սակայն, «Մորնինգ բրիֆինգը» հակված չէ հստակորեն վեր հանելու մոտավոր ապագայի փոփոխությունները: Ուստի ներկայիս ճգնաժամը կարելի է դիտարկել ոչ թե որպես արմատական շրջադարձ, այլ վերաձևումների արագացուցիչ[20]:

Համավարակը կամրապնդի երկրների ինքնավարությունն ու կուժեղացնի ազգայնականությունը: Բոլոր պետությունները, ինչպես ժողովրդավարական, այնպես էլ կենտրոնացված կառավարմամբ, այսօր ձեռնարկում են ճգնաժամի հաղթահարմանն ու բնակչության պաշտպանությանն ուղղված մի շարք արտակարգ միջոցներ: Եվ նրանց մեծամասնությունը համավա-

[15] Максим Буев, Пандемия неминуемо приведет к значительному усилению роли государства в экономике, 22 марта, https://www.vedomosti.ru/opinion/columns/2020/03/22/825883-koronavirus

[16] Похоронит ли коронавирус рыночную экономику: борьба с пандемией усиливает роль государственного регулирования, 12.04.2020, https://www.ng.ru/editorial/2020-04-12/2_7841_editorial.html

[17] Ричард Саква, Нормальность: коронавирус и трансформация государства, 29.04.2020, https://ru.valdaiclub.com/a/highlights/normalnost-koronavirus-i-transformatsiya-gosudarstva/

[18] Максим Буев, Пандемия неминуемо приведет к значительному усилению роли государства в экономике, 22 марта, 2020, https://www.vedomosti.ru/opinion/columns/2020/03/22/825883-koronavirus

[19] Надежда Алексеева, Алёна Медведева, Максим Лобанов, «Подлинной солидарности нет»: как пандемия коронавируса привела к кризису евро-атлантического единства, 26 апреля, 2020, https://russian.rt.com/world/article/740757-pandemiya-koronavirus-edinstvo

[20] Похоронит ли коронавирус рыночную экономику: борьба с пандемией усиливает роль государственного регулирования, 12.04.2020, https://www.ng.ru/editorial/2020-04-12/2_7841_editorial.html

ռակի նահանջի պայմաններում, անշուշտ, չի ցանկանա հրաժարվել ճգնաժամի ընթացքում ձեռք բերված լիազորություններից: Համաշխարհային տնտեսությունը, որպես այդպիսին, անվերապահորեն կվերափոխվի, բայց թե ինչ տեղի կունենա դրանից հետո, պայմանավորված կլինի այն հանգամանքով, թե կարող են արդյոք կառավարություններն առաջիկա վեց ամսվա կամ մեկ տարվա ընթացքում վերահսկելի դարձնել իրավիճակը: Եթե դա հաջողվի, ապա աշխարհը, ամենայն հավանականությամբ, կվերադառնա գլոբալացման ուղի, թեպետ որոշակի սկզբունքների վերանայմամբ: Իսկ եթե ճգնաժամը երկարաձգվի, ապա գլոբալացման հեռանկարն իրապես վտանգի տակ կդրվի՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ ինչքան խորանում են մարդկանց, ապրանքների և կապիտալի ազատ տեղաշարժի նկատմամբ սահմանափակումները, այնքան ավելի նախընտրելի է դառնում ներփակ տնտեսական քաղաքականության վարումը:

Կորոնավիրուսի համավարակը կհանգեցնի նրան, որ կորպորացիաներն արտադրության գլոբալ համակարգի օգուտները կսկսեն համեմատել ազգային մակարդակով մատակարարումների շղթայի հուսալիության հետ: Երկրորդ տարբերակին անցումը կնվազեցնի կախվածությունը միջազգային գործոններից, քաղաքացիներին կապահովի աշխատանքով և անհրաժեշտ ապրանքներով, թեև դրանք, ամենայն հավանականությամբ, կթանկանան[21]:

Ռեալիզմի հետևորդ հետազոտողների համոզմամբ նույնպես համավարակի հետևանքով առաջացած ճգնաժամը կխարխլի համաշխարհային տնտեսության հիմքը: Այլ խոսքով, ազգայնական միտումների ուժգնացմանը զուգահեռ, գլոբալացումն անկում կապրի՝ դրանով իսկ շեշտադրելով «ուժեղ» կառավարության դերի կարևորությունը:

Ի հակակշիռ ռեալիստների, ինտերնացիոնալիզմի հետևորդների կարծիքով՝ «ազգ-պետությունը» և ազգային ինքնավարության սկզբունքն ի վիճակի չեն հաղթահարելու ճգնաժամը, հետևաբար՝ համավարակի ճգնաժամը կստիպի երկրներին գտնել համագործակցության նոր եզրեր համաշխարհային աղետներից խուսափելու համար:

Այդուհանդերձ, մեր մոտեցմամբ, անկախ վերոնշյալից, այս ճգնաժամի փորձը ինտերնացիոնալիզմի հետևորդներին կստիպի համոզվել նրանում, որ նույնիսկ հրատապ անհրաժեշտության պարագայում միջազգային միասնական կազմակերպության կամ իշխանության կառուցակարգի ստեղծումն այսօր անհնար է, քանի որ համաշխարհային քաղաքականության կիզակետում դեռ երկար ժամանակ շարունակելու է մնալ «ազգ-պետություն» մոդելը, ինչի արդյունքում կարելի է ակնկալել ռեալիզմի և պրագմատիկ լավատեսության վրա հիմնված՝ ինտերնացիոնալիզմի թարմացված մոդելի ձևավորում:

Անշուշտ, դեռևս վաղ է խոսել նոր աշխարհակարգի հաստատման մասին, քանի դեռ ճգնաժամը, իր հետևանքներով հանդերձ, հիմնահատակ չի ավերել համաշխարհային տնտեսությունը:

Անկասկած է, որ համավարակի ավարտից հետո ազգային կառավարությունները և պետական ինստիտուտները կամրապնդեն իրենց դիրքը, ճգնաժամի պայմաններում երկրները կփնտրեն համաշխարհային աղետների կանխարգելման և/կամ չեզոքացման համընդհանուր կառուցակարգեր, մուլտիլատերիզմը կամրապնդվի համաշխարհային քաղաքականության մեջ՝ երկրներին «հետ մղելով» դեպի ԱՄՆ կողմնորոշված գլոբալացման երևույթներից: Իսկ արդեն ճգնաժամից հետո, որը կխաթարի ԱՄՆ-ի և ԵՄ-ի նկատմամբ վստահությունը, առավել հստակ կդառնա Արևելքի դերն աշխարհում՝ Չինաստանի, Ռուսաստանի, Հնդկաստանի ու Իրանի համար ապահովելով գործողությունների էական ազատություն[22]:

Համավարակի հաղթահարումից հետո կընդլայնվեն պետության և բիզնեսի միջև կապերը, իսկ պետությունները կդառնան ավելի կենտրոնացված: Այս ծանրագույն

[21] Коронавирус унес в прошлое комфорт и блага глобализации. Какой будет жизнь после пандемии? 23 марта, 2020, https://lenta.ru/articles/2020/03/23/coronavirus/

ճգնաժամն այսօր իսկ մեզ հնարավորություն է տալիս վերակառուցելու «պետություն-հասարակություն-բիզնես» փոխազդեցության համակարգը՝ այն դարձնելով ավելի կենսունակ և զարգացմանը միտված[23]:

Հարկ է նշել, որ բազմաթիվ երկրների կառավարություններ արդեն իսկ մշակել են ռազմավարական կարևոր ոլորտների, այդ թվում՝ սննդի և բժշկական արդյունաբերության վերականգնման և ընդլայնման միջոցառումների ծրագրեր: Ներքին շուկայի աջակցության քաղաքականությունը կրկին դառնում է գերակայող: Ընդ որում, նպատակը ոչ այնքան միջազգային առևտրի սահմանափակումն է, որքան ներքին հուսալի շուկայի ստեղծումը, որը թույլ կտա վերահսկել կախվածությունը միջազգային առևտրի բախումներից և հարվածներից:

Այսպիսով՝ ուժեղ իշխանությունը նոր ճգնաժամի պայմաններում կարող է փոխել մարդկանց վարքագիծը, քանի որ, ի տարբերություն 2008-2009 թթ. ճգնաժամի, կորոնավիրուսը պահանջում է պետական կոշտ գործիքների կիրառում: Միաժամանակ, այս համավարակն ամրապնդում է ազգայնականության դիրքը, թեև դրա ոչ էթնիկ ձևը[24]:

Աշխարհի ներկայիս տեսքը կարող է անկենսունակ ճանաչվել ոչ միայն գաղափարապես: Այսօր այն բացառապես ոչ գործնական է, տեխնիկական իմաստով՝ վտանգավոր, մանավանդ, եթե հաշվի առնենք համաշխարհային նոր աղետների (հումանիտար, տեխնոլոգիական, կլիմայական) առաջացման հավանականությունը: Ակնհայտ է, որ գլոբալացումը կշարունակի զարգանալ ինչպես գաղափարական, այնպես էլ կիրառական իմաստով: Մարդկանց և երկրների միջև ձևավորված կապերը հազիվ թե հնարավոր լինի կասեցնել: Սակայն, գլոբալացման ձևերը, անկասկած, կփոխվեն: Այսօրվա գլխավոր հարցը հետևյալն է. ինչ բնութագրիչներ կունենա հետգլոբալացվող աշխարհը: Կարո՞ղ են, արդյոք, այդ աշխարհի կառուցման մեջ օգտագործվել «հնուց մնացած» տարրեր, թե՞ պետք է հոգեբանորեն և նյութապես տրամադրվել արմատապես նոր համակարգի ստեղծմանը: Ակնհայտ է, որ միջազգային հանրությունը ստիպված կլինի որոնել հավասարակշռության նոր վիճակ ազգային և համաշխարհային զարգացումների միջև[25]:

Յուրաքանչյուր տնտեսական ցնցում թողնում է «ժառանգություն»: Կորոնավիրուսային այս ճգնաժամը նույնպես բացառություն չէ: Ոչ ոք չգիտի, թե ինչքան կշարունակվի համավարակը կամ ինչպիսին կլինեն դրա պատճառած մարդկային ու տնտեսական կորուստները, ուստի տնտեսագետները զգուշանում են կոնկրետ կանխատեսումներից: Քանի որ չկան երկու միանման տնտեսական ցնցումներ, չի կարող վերջնականապես պարզ լինել, թե ինչ «ժառանգություն» կթողնի այս մեկը[26]:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա, հաշվի առնելով վերոնշյալը, մեր երկիրն արդեն իսկ պետք է մշակած լիներ համաճարակային վտանգի գնահատման և վերահսկման շարունակական կառուցակարգ՝ հիմնվելով նախորդ փորձառության՝ հակազդեցության գործիքների օպտիմալացման հանգամանքի վրա: Դիտարկենք H1N1-ի օրինակը 2016 թվականին, երբ Հայաստանում գրանցվեց հիվանդության մոտ 900 և մահվան 19 դեպք: Արդյո՞ք դասեր քաղվել են այս փորձառությունից: Արդյո՞ք արձանագրվել են երկրի ներուժը զարգացնելու միտումներ, որոնք կիրառելի կլինեին

[22] Мехди Санаи, Мировой порядок после коронавируса: ничего не изменится? 21.04.2020, https://ru.valdaiclub.com/a/highlights/mirovoy-poryadok-posle-koronavirusa/

[23] Лейбин Виталий, Кризис и пандемия - хороший повод доказать, что природа государства меняется, Москва, 24.03.2020, https://expert.ru/2020/03/24/koronavirus-i-politika-lyubvi/

[24] Ճգնաժամի պահին մենք վարակված ենք անորոշությամբ, մարտի 27, 2020, https://mediamax.am/am/news/society/37059/

[25] Андрей Кадомцев, Новый мировой порядок или переживет ли глобализация пандемию коронавируса? 13.03.2020, https://interaffairs.ru/news/show/25646

[26] Խաչիկ Սողոմոնյան, Ինչպես է կորոնավիրուսը փոխում մեր տնտեսական կյանքը, 2020-04-23, https://www.hamakarg.am/?p=3731

այսօր: Չի հիշատակվում ոչ մի կանոնակարգ, ուղեցույց կամ փոխձառություն, որի հիմքում 2016-ի օրինակն է կամ նմանատիպ այլ իրավիճակ[27]:

Որոշում ընդունողների համար պետք է կարևորվի տնտեսական ակտիվության վերականգնման ծրագրումը՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ երբ սահմանափակման միջոցառումները չեղարկվեն, վարվող քաղաքականությունը պետք է արագորեն անցում կատարի դեպի պահանջարկի խթանում, ինչպես նաև ընկերություններին աջակցություն: Իսկ պարտքի մարումների հետաձգումը և պարտքերի վերակառուցումը, ամենայն հավանականությամբ, կշարունակվեն նաև վերականգնման փուլում[28]: Covid-19 ճգնաժամի հաղթահարումը կպահանջի նշանակալի նորամուծություններ, ինչպես նաև հսկայական հավաքական ջանքեր՝ ուղղված տնտեսական աճի և սոցիալական բարեկեցության միջև կայուն հավասարակշռության հաստատմանը: Այս գործընթացը հեշտ չի լինի: Մենք պետք է փոխենք ոչ միայն մեր ինստիտուտներն ու տնտեսական համակարգերը, այլև ինքներս մեզ[29]:

Եվ վերջապես, նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ ևս մեկ հարցի, որը, անշուշտ, եղել և մնում է հասարակության լայն շերտերի ուշադրության կենտրոնում: Խոսքը, այսպես կոչված, «դավադրության տեսությունների» մասին է: Բնավ հակված չլինելով վերջիններիս հիմնավորմանը կամ լրջորեն քննարկմանը, այդուհանդերձ, արձանագրենք հետևյալը. քաղաքականության մեջ երբեք միջոցների խտրություն չի դրվում, և մոլեգնող համավարակը քաղաքական նպատակների առաջմղման ևս մեկ գործիք է: Մասնավորապես՝ աշխարհով մեկ սրընթաց կերպով տարածվող, աֆրոամերիկացի Ջորջ Ֆլոյդի մահվանը հաջորդած «Black Lives Matter» (սևամորթների կյանքը նշանակություն ունի) շարժումը, որն իրականացվում է հակառասիստական «քողի ներքո», ընդամենն ուղղված է ուժերի վերաբաշխմանը, անկայունության ստեղծմանը, այդ թվում՝ ԱՄՆ նախագահական ընտրություններում Դոնալդ Թրամփի տապալմանն ու Դեմոկրատական կուսակցության հաղթանակին: Այս սցենարում գերազանց կերպով «տեղավորվում» է նաև համավարակի գործիքը, երբ գույների խտացման, փաստերի խեղաթյուրման, ընդհուպ մինչև սաբոտաժի միջոցով առաջ են մղվում քաղաքական շահերը:

Փաստորեն, համավարակն իսկապես կապվում է քաղաքականության հետ, բայց միայն այնքանով, որքանով այն այսօր ծառայում է որպես «շղարշ» քաղաքական վերադասավորումների համար:

Վերադառնալով համավարակային իրականությանը՝ պետք է արձանագրել, որ ինչպես աշխարհին բաժին հասած նախորդ աղետները, սա նույնպես կչեզոքացվի: Խնդիրը չեզոքացման «գնի» և դրանից հետո ստեղծված իրավիճակի մեջ է:

Պետության գերիշխանության հայեցակարգի վերադարձը հիշեցնում է Մեծ ճգնաժամի ժամանակաշրջանը, բայց պետք է հաշվի առնել, որ նախորդ դարի 30-ական թվականների և ներկայիս տնտեսությունների միջազգայնացման մակարդակները պարզապես անհամեմատելի են, և այդ կապերը դժվար թե իսպառ վերանան:

Մեր համոզմամբ՝ հետհամավարակային աշխարհը կբնութագրվի գլոբալացման և տեղայնացման (լոկալացման) ողջամիտ փոխզիջման մոդելով, որտեղ վերստին «կդիրքավորվեն» ազգային և էթնիկական առաջնահերթությունները:

[27] Շանթ Շեկհերդիմյան, Ներսես Կոպալյան, Հայաստանը պայքարում է կորոնավիրուսի դեմ. պետության կարողությունները և Սփյուռքը, March 29, 2020, https://www.evnreport.com/readers-forum/armenia-combats-the-coronavirus-state-capacity-and-the-diaspora-1

[28] Խաչիկ Սողոմոնյան, Սահմանափակման տնտեսական հետևանքները, 2020-04-20, https://www.hamakarg.am/?p=3645

[29] 3 միֆ համավարակի ճգնաժամի մասին և այն հաղթահարելու 5 առաջարկ, հունիսի 23, 2020, https://mediamax.am/am/news/society/38256/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. 3 միֆ համավարակի ճգնաժամի մասին և այն հաղթահարելու 5 առաջարկ, հունիսի 23, 2020, https://mediamax.am/am/news/society/38256/
2. Խաչիկ Սողոմոնյան, Ինչպես է կորոնավիրուսը փոխում մեր տնտեսական կյանքը, 2020-04-23, https://www.hamakarg.am/?p=3731
3. Խաչիկ Սողոմոնյան, Սահմանափակման տնտեսական հետևանքները, 2020-04-20, https://www.hamakarg.am/?p=3645
4. Ճգնաժամի պահին մենք վարակված ենք անորոշությամբ, մարտի 27, 2020, https://mediamax.am/am/news/society/37059/
5. Շանթ Շեկհերդիմյան, Ներսես Կոպալյան, Հայաստանը պայքարում է կորոնավիրուսի դեմ. պետության կարողությունները և Սփյուռքը, March 29, 2020, https://www.evnreport.com/readers-forum/armenia-combats-the-coronavirus-state-capacity-and-the-diaspora-1
6. Ո՛չ, կորոնավիրուսը չի փոխի գլոբալ աշխարհակարգը. Ջոզեֆ Նայ, ապրիլ 18, 2020, https://www.civilnet.am/news/2020/04/18/%D5%88%D5%9B%D5%B9-%D5%AF%D5%B8%D6%80%D5%B8%D5%B6%D5%A1%D5%BE%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%BD%D5%A8-%D5%B9%D5%AB-%D6%83%D5%B8%D5%AD-%D5%AB-%D5%A3%D5%AC%D5%B8%D5%A2%D5%A1%D5%AC-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D6%80%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A8%E2%80%A4-%D5%8B%D5%B8%D5%A6%D5%A5%D6%86-%D5%86%D5%A1%D5%B5/382256
7. Андрей Кадомцев, Новый мировой порядок или переживет ли глобализация пандемию коронавируса? 13.03.2020, https://interaffairs.ru/news/show/25646
8. Генри Фаррелл, Абрахам Ньюман, Остановит ли коронавирус глобализацию в привычном понимании? Пандемия продемонстрировала уязвимости рынка, о которых никто не подозревал, 18.03.2020, https://globalaffairs.ru/articles/ostanovit-li-koronavirus-globalizacziyu-v-privychnom-ponimanii/
9. Георгий Голованов, Пандемия положит конец мировой экономике в ее нынешнем виде, 22 апреля, https://hightech.plus/2020/04/22/pandemiya-polozhit-konec-mirovoi-ekonomike-v-ee-nineshnem-vide
10. Дмитрий Евстафьев, Пандемия коронавируса: путь туда, но не обратно, «Эксперт» № Online version (0), М., 06.04.2020, https://expert.ru/expert/2020/15/pandemiya-koronavirusa-put-tuda-no-ne-obratno/
11. Ирина Таран, Елизавета Комарова, Стадия переосмысления: как пандемия коронавируса может трансформировать Европейский союз, 5 мая 2020, https://russian.rt.com/world/article/743470- evropa-es-polsha-koronavirus-vlast
12. Коронавирус унес в прошлое комфорт и блага глобализации. Какой будет жизнь после пандемии? 23 марта 2020, https://lenta.ru/articles/2020/03/23/coronavirus/
13. Лейбин Виталий, «Кризис и пандемия - хороший повод доказать, что природа государства меняется», М., 24.03.2020, https://expert.ru/2020/03/24/koronavirus-i-politika-lyubvi/
14. Максим Буев, Пандемия неминуемо приведет к значительному усилению роли государства в экономике, 22 марта, https://www.vedomosti.ru/opinion/columns/2020/03/22/825883-koronavirus
15. Мехди Санаи, Мировой порядок после коронавируса: ничего не изменится? 21.04.2020, https://ru.valdaiclub.com/a/highlights/mirovoy-poryadok-posle-koronavirusa/
16. Надежда Алексеева, Алёна Медведева, Максим Лобанов, «Подлинной солидарности нет»: как пандемия коронавируса привела к кризису евроатлантического единства, 26 апреля 2020, https://russian.rt.com/world/article/740757-pandemiya-koronavirus-edinstvo
17. Николай Проценко, Назад к «большому правительству»: государства заливают коронавирус деньгами, 26 марта 2020, https://eadaily.com/ru/news/2020/03/26/nazad-k-bolshomu-pravitelstvu-gosudarstva-zalivayut-koronavirus-dengami
18. Оксана Синявская, Коронавирус и будущее государства всеобщего благосостояния, 16.04.2020, https://ru.valdaiclub.com/a/highlights/koronavirus-i-budushchee-gosudarstva/
19. Похоронит ли коронавирус рыночную экономику: Борьба с пандемией усиливает роль государственного регулирования, 12.04.2020, https://www.ng.ru/editorial/2020-04-12/2_7841_editorial.html
20. Ричард Саква, Нормальность: коронавирус и трансформация государства, 29.04.2020, https://ru.valdaiclub.com/a/highlights/normalnost-koronavirus-i-transformatsiya-gosudarstva/
21. Фёдор Лукьянов, Время и пища для размышлений, 17.03.2020, https://globalaffairs.ru/articles/vremya-i-pishcha-dlya-razmyshleniya/

Давид АХВЕРДЯН
Директор исследовательского центра «Амберд», АГЭУ,
доктор экономических наук, профессор

АРМЕНИЯ И МИР

ПАНДЕМИЯ: КОНЕЦ ГЛОБАЛИЗАЦИИ ИЛИ ПЕРЕОСМЫСЛЕНИЕ РОЛИ ГОСУДАРСТВА?

В статье в основном обсуждаются последствия пандемии COVID-19 в контексте глобализации, по результатам которых делается вывод о том, что глобальный мир вовсе не был готов к такому удару, и при первых же импульсах связи, сформированные годами, исчезли. Развал «хрупкой» глобализации создаёт основы для государственного патернализма и усугубляет дальнейшее укрепление концепции «нация-государство». В этом контексте автор представляет наблюдения относительно будущего постпандемического мира.

Ключевые слова: *пандемия COVID-19, глобализация, разрыв глобальных цепочек, переосмысление роли государства*

Davit HAKHVERDYAN
Director of "Amberd" Research Center, ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor

ARMENIA AND WORLD

PANDEMIC: THE END OF GLOBALIZATION OR RECONSIDERATION OF THE ROLE OF THE STATE?

The paper mainly discusses the results of the COVID-19 pandemic in the context of globalization, from which it was concluded that the global world was not at all ready for such a blow, and in the case of the first signals, the yearslong ties were severed. The collapse of "fragile" globalization lays the groundwork for state paternalism and deepens the further strengthening of the "nation-state" concept. In this context, the author also comments on the future of the post-infection world.

Key words: *COVID-19 pandemic, globalization, global chain breakdown, reconsideration of the role of the state*

1981
1985
1989
1993
1997
2001
200